

Կ-905-22.03.2021-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՍՈՒԹԻՒԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմ՝ ավտովարորդ, կամ ավտոտրանսպորտային միջոցի երկրորդ ավտովարորդ, կամ ավտովարորդի օգնական, որն ուղեկցում է ավտովարորդին՝ որոշակի մանևրների ժամանակ նրան աջակցելու, հարկ եղած դեպքում նրան փոխարինելու և սովորաբար տրանսպորտային գործողություններին արդյունավետ մասնակցելու համար.

ավտովարորդ՝ ավտոտրանսպորտային միջոցը վարող անձ.

թվային տախոգրաֆ՝ ավտոտրանսպորտային միջոցի խցիկում կամ սրահում տեղադրված հատկ սարք, որն ապահովում է ավտոտրանսպորտային միջոցի արագության ռեժիմի, երթևի, սահմանված ժամանակահատվածում անցած ճանապարհահատվածի, կարճաժամկետ եւ երկարաժամկետ դադարների ! կանգառների վերաբերյալ տվյալների անդադար եւ անձեռնմխելի արձանագրումը.

վարելու ժամանակահատված՝ հանգստի կամ ընդմիջման ժամերից հետո մինչև հաջորդ ընդմիջման կամ հանգստի ժամը ավտովարորդի ավտոտրանսպորտային միջոցը վարելու կուտակված ժամերը.

շաբաթ՝ երկուշաբթի՝ ժամը 00.00-ից մինչև կիրակի՝ ժամը 23.59-ն ընկած ժամանակահատված.

հանգստի ժամանակահատված՝ ցանկացած չընդհատված ժամանակահատված, որի ընթացքում ավտովարորդը կարող է ազատ տնօրինել իր ժամանակը.

շաբաթական կանոնավոր հանգստի ժամանակահատված՝ առնվազն 45 ժամ տեւողությամբ հանգստի ժամ.

շաբաթական կրճատված հանգստի ժամանակահատված՝ առնվազն 45 ժամ տեւողությամբ հանգստի ժամանակահատված, որը կարող է կրճատվել նվազագույնը 24 հաջորդական ժամի:»

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետությունում միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող միկրոավտոբուսները և ավտոբուսները, ինչպես նաև թույլատրելի առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող, ներառյալ՝ կցորդի կամ կիսակցորդի միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեն թվային տախոգրաֆով, բացառությամբ՝

1) «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի կողմ չհանդիսացող պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցների,

2) միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների, եթե երթուղու երկարությունը չի գերազանցում 50 կմ-ը,

3) 40 կմ/ժ առավելագույն թույլատրելի արագությունը գերազանցելու տեխնիկապես հնարավորություն չունեցող ավտոտրանսպորտային միջոցների,

4) պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության մարմինների կողմից կամ նրանց պատկանող տրանսպորտային միջոցների,

5) 10-ից 17 նստատեղ (ներառյալ ավտովարորդի) ունեցող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են բացառապես ոչ առևտրային նպատակներով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար,

6) ոչ առևտրային նպատակներով մարդասիրական օգնության համար օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են արտակարգ իրավիճակների դեպքում կամ փրկարարական աշխատանքներ իրականացնելիս.

7) վթարային կամ բժշկական նպատակներով օգտագործվող մասնագիտացված ավտոտրանսպորտային միջոցների.

8) ավտոտրանսպորտային միջոցների, որոնք տեխնիկական զարգացման, վերանորոգման կամ պահպանման նպատակներով ենթարկվում են ավտոճանապարհային փորձարկումների, ինչպես նաև նորաստեղծ կամ

վերակառուցված ավտոտրանսպորտային միջոցների, որոնք դեռեւս չեն հանձնվել շահագործման,

9) ոչ առևտրային նպատակներով ապրանքների փոխադրման համար օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների կամ համակցված ավտոտրանսպորտային միջոցների, որոնց թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 7,5 տոննան,

10) մշակութային արժեք ներկայացնող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են ոչ առևտրային նպատակներով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար,

11) կոյուղու, ջրհեղեղից պաշտպանության, ջրի, գազի և էլեկտրականության հետ կապված ծառայությունների, մայրուղիների պահպանման և հսկողության, աղբի հավաքման և վերացման, հեռագրային և հեռախոսային ծառայությունների, փոստային առաքանու փոխադրման, ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման և ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդիչների և ընդունիչների հայտնաբերման նպատակով օգտագործվող, ինչպես նաև կրկեսի և գվարճանքի պարագաներ փոխադրող տրանսպորտային միջոցների,

12) տրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են գյուղատնտեսությամբ կամ այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ընկերությունների կողմից իրենց անձնական ձեռնարկատիրական գործունեության նպատակներով բեռնափոխադրումների համար՝ ընկերության հիմնական վայրից մինչև 100 կմ շառավղի սահմաններում:»:

2. 3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«4. Թվային տախոգրաֆով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպությունները և ավտովարորդները պետք է ունենան համապատասխանաբար կազմակերպության և ավտովարորդի, իսկ ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրված թվային տախոգրաֆների ստուգաչափում իրականացնող արհեստանոցներն՝ արհեստանոցի քարտեր, որոնց ձևերը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Թվային տախոգրաֆների կառուցվածքին, շահագործմանը, փորձարկմանը, տեղադրմանը և զննմանը ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Թվային տախոգրաֆով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն թվային տախոգրաֆից եւ տախոգրաֆի քարտերից ներբեռնված բոլոր տվյալների պահպանումը գրառումից հետո առնվազն 12 ամիս եւ տրանսպորտի

բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից պահանջի դեպքում տրամադրեն տրանսպորտային միջոցների թվային տախտոգրաֆների կողմից արձանագրված տվյալների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը:»:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ և 8-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«7. Ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի վարելու և հանգստի ժամանակահատվածները «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներին համապատասխան պետք է՝

1) օրական վարելու ժամանակահատվածը չգերազանցի 9 ժամը: Օրական վարելու ժամերը կարող են տևել մինչև 10 ժամ, բայց ոչ ավելի, քան շաբաթվա ընթացքում երկու անգամ,

2) միջին շաբաթական վարելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 48 ժամը: Շաբաթվա առավելագույն վարելու ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև 56 ժամ,

3) երկու հաջորդական շաբաթների ընթացքում կուտակված ընդհանուր վարելու ժամերը չպետք է գերազանցեն 90 ժամը,

4) չորսուկես ժամ վարելուց հետո ավտովարորդը պետք է ունենա առնվազն քառասունհինգ րոպե տևողությամբ ընդմիջում, եթե նա չի սկսում հանգստի ժամանակահատվածը: Ընդմիջումը կարող է բաժանվել առնվազն 15 րոպե և 30 րոպե ժամանակահատվածների, որից 15 րոպեանոց ընդմիջումը կիրառվում է առաջին չորսուկես ժամը վարելու ընթացքում, իսկ 30 րոպեն՝ չորսուկես ժամը վարելուց հետո,

5) յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում ավտովարորդը պետք է ունենա առնվազն 11 անընդմեջ ժամ ամենօրյա հանգիստ, որը կարող է կրճատվել մինչև առնվազն 9 անընդմեջ ժամի՝ մեկ շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան երեք անգամ,

6) օրական հանգստի ժամանակահատվածը ընդմիջման հետ միասին կազմում է 12 ժամ, որը կարող է բաժանվել անընդմեջ 3 ժամ և 9 ժամ հանգստի ժամանակահատվածների: Նախորդ օրական կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածից հետո յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում վարորդն ունի եւս մեկ օր հանգստի ժամանակ:

7) ավտովարորդը ունի շաբաթական կանոնավոր հանգիստ: Երկու հաջորդական շաբաթների ընթացքում վարորդն ունի առնվազն երկշաբաթյա կանոնավոր հանգիստ կամ մեկ շաբաթական կանոնավոր հանգիստ եւ առնվազն 24 ժամ տևողությամբ մեկ շաբաթական կրճատված հանգիստ: Կրճատումը պետք է փոխհատուցվի համարժեք հանգստով, որն ամբողջությամբ վերցվում է մինչեւ տվյալ շաբաթվա հաջորդող երրորդ շաբաթվա ավարտը: Շաբաթական հանգստի ժամանակահատվածը սկսվում է նախորդ

շաբաթական ժամանակահատվածից հետո ոչ ուշ, քան վեց 24-ժամյա ժամանակահատվածից հետո:

8) օրական կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածից հետո 30 ժամվա ընթացքում, ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի յուրաքանչյուր վարորդ պետք է ունենա նոր՝ առնվազն ինը ժամ տեւողությամբ օրական հանգստի ժամանակահատված:

9) ցանկացած բնույթի հանգիստ, որը վերցվում է որպես շաբաթական հանգստի ժամանակահատվածի կրճատման փոխհատուցում, կցվում է առնվազն ինը ժամ ընդգրկող այլ հանգստի ժամանակահատվածին: Եթե վարորդն ընտրում է այդ տարբերակը, ապա վարորդը մեկնարկի վայրից հետո կարող է վերցնել օրական հանգստի ժամերը եւ շաբաթական կրճատված հանգիստը տրանսպորտային միջոցում, եթե յուրաքանչյուր վարորդի համար տրանսպորտային միջոցում առկա են քննելու համար նախատեսված համապատասխան հարմարություններ, եւ եթե տրանսպորտային միջոցն կանգնած վիճակում է:

10) երկու շաբաթվա համար նախատեսված շաբաթական հանգստի ժամանակահատվածը կարող է հաշվարկվել ցանկացած շաբաթվա համար, բայց ոչ երկու շաբաթվա համար միասին:

8. Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տրանսպորտային միջոցներում թվային տախտոգրաֆի շահագործման պահանջների տեսչական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ձանապարհներին, տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված հատուկ գրպանիկներում, սահմանային անցման կետերում և ավտոմոբիլային տրանսպորտով միջպետական փոխադրումներ իրականացնող կազմակերպություններում:»:

Հոդված 4. Ուժը կորցրած ձանաչել Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

Վոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ԱՎՏՈՍՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» 2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-233-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով.

«ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմ՝ ավտովարորդ, կամ ավտոտրանսպորտային միջոցի երկրորդ ավտովարորդ, կամ ավտովարորդի օգնական, որն ուղեկցում է ավտովարորդին՝ որոշակի մանևրների ժամանակ նրան աջակցելու, հարկ եղած դեպքում նրան փոխարինելու և սովորաբար տրանսպորտային գործողություններին արդյունավետ մասնակցելու համար.

ավտովարորդ՝ ավտոտրանսպորտային միջոցը վարող անձ.

թվային տախոգրաֆ՝ ավտոտրանսպորտային միջոցի խցիկում կամ սրահում տեղադրված հատկ սարք, որն ապահովում է ավտոտրանսպորտային միջոցի արագության ռեժիմի, երթևի, սահմանված ժամանակահատվածում անցած ճանապարհահատվածի, կարճաժամկետ եւ երկարաժամկետ դադարների և կանգառների վերաբերյալ տվյալների անդադար եւ անձեռնմխելի արձանագրումը.

վարելու ժամանակահատված՝ հանգստի կամ ընդմիջման ժամերից հետո մինչև հաջորդ ընդմիջման կամ հանգստի ժամը ավտովարորդի ավտոտրանսպորտային միջոցը վարելու կուտակված ժամերը.

շաբաթ՝ երկուշաբթի՝ ժամը 00.00-ից մինչև կիրակի՝ ժամը 23.59-ն ընկած ժամանակահատված.

հանգստի ժամանակահատված՝ ցանկացած չընդհատված ժամանակահատված, որի ընթացքում ավտովարորդը կարող է ազատ տնօրինել իր ժամանակը.

շաբաթական կանոնավոր հանգստի ժամանակահատված՝ առնվազն 45 ժամ տեւողությամբ հանգստի ժամ.

շաբաթական կրճատված հանգստի ժամանակահատված՝ առնվազն 45 ժամ տեւողությամբ հանգստի ժամանակահատված, որը կարող է կրճատվել նվազագույնը 24 հաջորդական ժամի:»

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետությունում միջպետական ուղևորափոխադրումներ իրականացնող միկրոավտոբուսները և ավտոբուսները, ինչպես նաև թույլատրելի

առավելագույն 3,5 տոննա քաշը գերազանցող, ներառյալ՝ կցորդի կամ կիսակցորդի միջպետական բեռնափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցները պետք է կահավորված լինեն թվային տախոգրաֆով, բացառությամբ՝

1) «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի կողմ չհանդիսացող պետություններում հաշվառված տրանսպորտային միջոցների,

2) միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող ավտոտրանսպորտային միջոցների, եթե երթուղու երկարությունը չի գերազանցում 50 կմ-ը,

3) 40 կմ/ժ առավելագույն թույլատրելի արագությունը գերազանցելու տեխնիկապես հնարավորություն չունեցող ավտոտրանսպորտային միջոցների,

4)

պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության մարմինների կողմից կամ նրանց պատկանող տրանսպորտային միջոցների.

~~զինված ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության, հրշեջ ծառայությունների եւ հասարակական կարգի պահպանման համար պատասխանատու ուժերի կողմից կամ նրանց հսկողությամբ օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների,~~

5) 10-ից 17 նստատեղ (ներառյալ ավտովարորդի) ունեցող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են բացառապես ոչ առևտրային նպատակներով ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու համար,

6) ոչ առևտրային նպատակներով մարդասիրական օգնության համար օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են արտակարգ իրավիճակների դեպքում կամ փրկարարական աշխատանքներ իրականացնելիս.

7) վթարային կամ բժշկական նպատակներով օգտագործվող մասնագիտացված ավտոտրանսպորտային միջոցների.

~~մասնագիտացված վթարային եւ բժշկական նպատակներով օգտագործվող մասնագիտացված ավտոտրանսպորտային միջոցների.~~

8) ավտոտրանսպորտային միջոցների, որոնք տեխնիկական զարգացման, վերանորոգման կամ պահպանման նպատակներով ենթարկվում են ավտոճանապարհային փորձարկումների, ինչպես նաև նորաստեղծ կամ վերակառուցված ավտոտրանսպորտային միջոցների, որոնք դեռեւս չեն հանձնվել շահագործման,

9) ոչ առևտրային նպատակներով ապրանքների փոխադրման համար օգտագործվող ավտոտրանսպորտային միջոցների կամ համակցված ավտոտրանսպորտային միջոցների, որոնք թույլատրելի առավելագույն զանգվածը չի գերազանցում 7,5 տոննան,

10) մշակութային արժեք ներկայացնող ավտոտրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են ոչ առևտրային նպատակներով ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների համար,

11) կոյուղու, ջրհեղեղից պաշտպանության, ջրի, գազի և էլեկտրականության հետ կապված ծառայությունների, մայրուղիների պահպանման և հսկողության, աղբի հավաքման և վերացման, հեռագրային և հեռախոսային ծառայությունների, փոստային առաքանու փոխադրման, ռադիոյի ու հեռուստատեսության հեռարձակման և ռադիոյի ու հեռուստատեսության հաղորդիչների և ընդունիչների հայտնաբերման նպատակով օգտագործվող, ինչպես նաև կրկեսի և գվարձանքի պարագաներ փոխադրող տրանսպորտային միջոցների,

12) տրանսպորտային միջոցների, որոնք օգտագործվում են գյուղատնտեսությամբ կամ այլ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ընկերությունների կողմից իրենց անձնական ձեռնարկատիրական գործունեության նպատակներով բեռնափոխադրումների համար՝ ընկերության հիմնական վայրից մինչև 100 կմ շառավղի սահմաններում:»:

2. 3-րդ մասից հետո լրացնել նոր 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«4. Թվային տախոգրաֆով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպությունները և ավտովարորդները պետք է ունենան համապատասխանաբար կազմակերպության և ավտովարորդի, իսկ ավտոտրանսպորտային միջոցներում տեղադրված թվային տախոգրաֆների ստուգաչափում իրականացնող արհեստանոցներն՝ արհեստանոցի քարտեր, որոնց ձևերը և տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Թվային տախոգրաֆների կառուցվածքին, շահագործմանը, փորձարկմանը, տեղադրմանը և զննմանը ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Թվային տախոգրաֆով կահավորված ավտոտրանսպորտային միջոցներ շահագործող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը պետք է ապահովեն թվային տախոգրաֆից եւ տախոգրաֆի քարտերից ներբեռնված բոլոր տվյալների պահպանումը գրառումից հետո առնվազն 12 ամիս եւ տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից պահանջի

դեպքում տրամադրեն տրանսպորտային միջոցների թվային տախտոգրաֆների կողմից արձանագրված տվյալների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը»:

Հոդված 3. Օրենքի 27-րդ հոդվածում լրացնել նոր 7-րդ և 8-րդ մասեր հետևյալ բովանդակությամբ.

«7. Ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի վարելու և հանգստի ժամանակահատվածները «Միջազգային ավտոճանապարհային փոխադրումներ կատարող տրանսպորտային միջոցների անձնակազմի աշխատանքի մասին» համաձայնագրի պահանջներին համապատասխան պետք է`

1) օրական վարելու ժամանակահատվածը չգերազանցի 9 ժամ: Օրական վարելու ժամերը կարող են տևել մինչև 10 ժամ, բայց ոչ ավելի, քան շաբաթվա ընթացքում երկու անգամ,

2) միջին շաբաթական վարելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել 48 ժամը: Շաբաթվա առավելագույն վարելու ժամանակահատվածը կարող է երկարաձգվել մինչև 56 ժամ,

3) երկու հաջորդական շաբաթների ընթացքում կուտակված ընդհանուր վարելու ժամերը չպետք է գերազանցեն 90 ժամը,

4) չորսուկես ժամ վարելուց հետո ավտովարորդը պետք է ունենա առնվազն քառասունհինգ րոպե տևողությամբ ընդմիջում, եթե նա չի սկսում հանգստի ժամանակահատվածը: Ընդմիջումը կարող է բաժանվել առնվազն 15 րոպե և 30 րոպե ժամանակահատվածների, որից 15 րոպեանոց ընդմիջումը կիրառվում է առաջին չորսուկես ժամը վարելու ընթացքում, իսկ 30 րոպեն` չորսուկես ժամը վարելուց հետո,

5) յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում ավտովարորդը պետք է ունենա առնվազն 11 անընդմեջ ժամ անենօրյա հանգիստ, որը կարող է կրճատվել մինչև առնվազն 9 անընդմեջ ժամի` մեկ շաբաթվա ընթացքում ոչ ավելի, քան երեք անգամ,

6) օրական հանգստի ժամանակահատվածը ընդմիջման հետ միասին կազմում է 12 ժամ, որը կարող է բաժանվել անընդմեջ 3 ժամ և 9 ժամ հանգստի ժամանակահատվածների: Նախորդ օրական կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածից հետո յուրաքանչյուր քսանչորս ժամվա ընթացքում վարորդն ունի եւս մեկ օր հանգստի ժամանակ:

7) ավտովարորդը ունի շաբաթական կանոնավոր հանգիստ: Երկու հաջորդական շաբաթների ընթացքում վարորդն ունի առնվազն երկշաբաթյա կանոնավոր հանգիստ կամ մեկ շաբաթական կանոնավոր հանգիստ եւ առնվազն 24 ժամ տեւողությամբ մեկ շաբաթական կրճատված հանգիստ: Կրճատումը պետք է փոխհատուցվի համարժեք հանգստով, որն ամբողջությամբ վերցվում է մինչեւ տվյալ շաբաթվա հաջորդող երրորդ շաբաթվա ավարտը: Շաբաթական հանգստի ժամանակահատվածը սկսվում է նախորդ

շաբաթական ժամանակահատվածից հետո ոչ ուշ, քան վեց 24-ժամյա ժամանակահատվածից հետո:

8) օրական կամ շաբաթական հանգստի ժամանակահատվածից հետո 30 ժամվա ընթացքում, ավտոտրանսպորտային միջոցի անձնակազմի յուրաքանչյուր վարորդ պետք է ունենա նոր՝ առնվազն ինը ժամ տեւողությամբ օրական հանգստի ժամանակահատված:

9) ցանկացած բնույթի հանգիստ, որը վերցվում է որպես շաբաթական հանգստի ժամանակահատվածի կրճատման փոխհատուցում, կցվում է առնվազն ինը ժամ ընդգրկող այլ հանգստի ժամանակահատվածին: Եթե վարորդն ընտրում է այդ տարբերակը, ապա վարորդը մեկնարկի վայրից հետո կարող է վերցնել օրական հանգստի ժամերը եւ շաբաթական կրճատված հանգիստը տրանսպորտային միջոցում, եթե յուրաքանչյուր վարորդի համար տրանսպորտային միջոցում առկա են քննելու համար նախատեսված համապատասխան հարմարություններ, եւ եթե տրանսպորտային միջոցն կանգնած վիճակում է:

10) երկու շաբաթվա համար նախատեսված շաբաթական հանգստի ժամանակահատվածը կարող է հաշվարկվել ցանկացած շաբաթվա համար, բայց ոչ երկու շաբաթվա համար միասին:

8.

Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տրանսպորտային միջոցներում թվային տախտոգրաֆի շահագործման պահանջների տեսչական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին, տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված հատուկ գրպանիկներում, սահմանային անցման կետերում և փոխադրումներ իրականացնող կազմակերպություններում:

~~Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տրանսպորտային միջոցներում թվային տախտոգրաֆի կիրառման պահանջների տեսչական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին եւ կազմակերպություններում:»:~~

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասը:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից մեկ տարի հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԱՎՏՈՄՈՒԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-905-22.03.2021-ՏՀ-011/1)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին»	Խմբագրել «զինված ծառայությունների» պարբերությունը, քանի որ պարզ չէ, թե ինչ ծառայությունների մասին է խոսքը:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է

		Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 4-րդ կետ			
2.	« <i>կառավարություն</i>	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 7-րդ կետ	«և» բառն անհրաժեշտ է փոխարինել «կամ» բառով, քանի որ գործող խմբագրության համաձայն ստացվում է, որ մասնագիտացված ավտոտրանսպորտային միջոցը պետք է օգտագործվի միաժամանակ վթարային և բժշկական նպատակներով:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է
3.	« <i>կառավարություն</i>	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 8-րդ մաս	Հստակեցման կարիք ունի, թե ինչ կազմակերպություններում է նախատեսվում տեսչական վերահսկողություն իրականացնել:	Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, միևնույն ժամանակ 8-րդ մասը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ «8.	Ընդունվել է

				<p>Տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից տրանսպորտային միջոցներում թվային տախտգրաֆի շահագործման պահանջների տեսչական վերահսկողությունն իրականացվում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներին, տրանսպորտային միջոցների կայանման համար նախատեսված հատուկ գրպանիկներում, սահմանային</p>	
--	--	--	--	---	--

				<p>անցման կետերում և փոխադրումներ իրականացնող կազմակերպություններում: Թվային տախտգրաֆի շահագործման տեսչական վերահսկողությանը ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:</p>	
<p>4</p>	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդվածով լրացվող օրենքի 27-րդ</p>	<p>Նախատեսվում է սահմանել, որ թվային տախտգրաֆի շահագործման տեսչական վերահսկողությանը ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:</p> <p>Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ վարչապետի աշխատակազմի</p>	<p>Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն, դրույթը հանվել է</p>	<p>Ընդունվել է</p>

		<p>հողվածի 8-րդ մաս</p>	<p>տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի կողմից ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հետ համատեղ մշակվում է «Տրանսպորտի բնագավառի վերահսկողության մասին» օրենքի նախագիծ, որը նախատեսելու է տրանսպորտային օրենսդրության նկատմամբ վերահսկողական բոլոր անհրաժեշտ մեխանիզմները և դրանց վերաբերող կարգավորումները:</p> <p>Որպես օրինակ, կարելի է դիտարկել նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքը, որտեղ ստուգումների իրականացման ամբողջ ընթացակարգը նկարագրված է օրենքով, այլ ոչ ՀՀ կառավարության որոշմամբ:</p>		
--	--	-------------------------	---	--	--

			<p>Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում եմ հանել ՀՀ կառավարության կողմից թվային տախտգրաֆի շահագործման տեսչական վերահսկողությանը ներկայացվող պահանջները սահմանելու վերաբերյալ դրույթը:</p>		
5	<p>«ՀՀ կառավարություն</p>	<p>«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ</p>	<p>Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասը, համաձայն որի՝ հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը՝ առաջարկում եմ նախագծով օրենքի համապատասխան հոդվածներում նոր խմբագրությամբ շարադրվող մասերում «Միջպետական փոխադրումներ» բառերը համապատասխանեցնել հոդվածի վերնագրին, մասնավորապես՝ 137.1-ին հոդվածում «Միջպետական փոխադրումներ» բառերը փոխարինել</p>	<p>Ընդունվել է Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություններ, փոփոխությունները համապատասխանեցվել են հոդվածների վերնագրերին</p>	<p>Ընդունվել է</p>

			<p>«Միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ» բառերով, 137.7-րդ հոդվածում «Միջպետական փոխադրումներ» բառերը և «միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ» բառերը փոխարինել «միջպետական ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ» բառերով, ինչպես նաև 137.8-րդ հոդվածում «Միջպետական փոխադրումներ» բառերը և «միջպետական կանոնավոր ուղևորափոխադրումներ» բառերը փոխարինել «միջպետական բեռնափոխադրումներ» բառերով:</p>		
--	--	--	--	--	--